Հաստատում եմ՝
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Կարապետյան
(Պատվիրատուի ղեկավար անձի անվանումը)

(ստորագրություն)

**Արձանագրություն N 3**

«ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԾՁԲ-18/14/1» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (Հայաստանի տնտեսության գերակա ոլորտների և առանցքային խնդիրների վերաբերյալ տեղեկատվական արշավի կազմակերպում և դրա շրջանակումտնտեսական թեմաներով տեղեկատվական-վերլուծական հեռուստահաղորդաշար պատրաստում և թողարկում) )

ք. Երևան

20 հուլիսի 2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի

նախագահ՝ Մ.Կարապետյան

քարտուղար՝ Մ.Գրիգորյան

անդամներ՝ Մ.Եսայան, Ա.Խեչոյան, Ա.Չիլինգարյան, Ա.Քոչարյան

**1. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի ներկայացման մասին**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ էլեկտրոնային եղանակով տեղեկացվել է մասնակիցներին 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել և ներկայացնել համապատասխան փաստաթղթերը՝ վերջիններս շտկել և ներկայացրել են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ ներառյալ լիցենզիան:

1.1 Հիմք ընդունելով մասնակցների կողմից ներկայացրած գնային առաջարկները՝ հանձնաժողովը որոշեց՝

ա/ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «**Փրայմ Թայմ**» ՍՊԸ-ին:

բ/ ընթացակարգի 2-րդ տեղ զբաղեցնող ճանաչել «**Սփրին Գրուպ**» ՍՊԸ-ին:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնելու 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց

պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից կպահանջվի համապատասխան որակավորման չափանիշները հիմանավորող փաստաթղթերը, որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին կտրամադրվի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատաման թերթիկները և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0***

7. **Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ**

Հարցումներ չեն ստացվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0***

8. **Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ**

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա ք.Երևան,Մ.Մկրտչյան 5, 910 սենյակ հասցեում, սույն արձանագրության 1-ին կետի 1.2 կետով սահմանված փաստաթղթերի ներկայացման ժամկետի ավարտից հետո:

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0***

Նախագահ՝ _____ Մ.Կարապետյան

Քարտուղար՝ _____ Մ.Գրիգորյան

անդամներ՝ _____ Մ.Եսայան

_____ Ա.Խեչոյան

_____ Ա.Չիլինգարյան

_____ Ա.Քոչարյան